Հավելված 1.

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ. ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄ

Փաստաթուղթը նպատակ ունի բացահայտել Հայաստանի և Արցախի անվտանգության և պետականության պահպանման հիմնախնդիրների վերաբերյալ հասարակական կարծիքը, ընկալումները: Հայաստանում, Արցախում և Սփյուռքում անկախ կազմակերպությունների/խմբերի կողմից անցկացվել են տարբեր հարցումներ, որոնք անդրադառնում են այդ թեմաներին. ամենաարդիական հարցերն ու ստացված վիճակագրությունը ներկայացված են ստորև:

Հայկական պետություն ու ինքնիշխանություն

Կովկասյան բարոմետրի (2021թ.) համաձայն՝ հարցվողների 2/3-ը համարում է, որ Խորհրդային Միության լուծարումը բացասական երևույթ էր, իսկ կեսից ավելին (56%) կարծում է, որ կյանքը վատացել է Խորհրդային Միությունից հետո (հատկապես տնտեսական իրավիճակի վատթարացման (52%) և աշխատատեղերի կրճատմամբ (16%) պայմանավորված):



Արդյո՞ք Սովետական Միության լուծարումը Հայաստանի համար լավ բան էր, թե՞ վատ: n=1647

Պատմականորեն, Հայաստանի քաղաքացիները գործազրկությունը համարում էին երկրի առջև ծառացած ամենակարևոր խնդիրը, սակայն 44-օրյա պատերազմից հետո առաջնահերթությունները կտրուկ փոխվել են:



Ի՞նչ եք կարծում՝ ո՞րն է Հայաստանի առջև ծառացած ամենամեծ խնդիրը հիմա:

Համաձայն 2021թ. ապրիլ-սեպտեմբեր ամիսներին Էմ Փի Ջի ՍՊԸ կողմից անցկացված հարցման արդյունքների (Հայաստանում սոցիալ-քաղաքական իրավիճակի գնահատում)՝ «անվտանգությունն ու պաշտպանությունը» երկրորդն էր կառավարության կողմից լուծման ենթակա համարվող առաջնահերթ խնդրիների ցուցակում (հարցվողների 88%-ը, «ռազմագերիների վերադարձից» հետո՝ 94%):

Կովկասյան բարոմետրը հետևում է նաև պետական հաստատությունների նկատմամբ ընկալումներին: Այսպես, մինչդեռ վարչապետի (20%, 70%, 13%՝ համապատասխանաբար 2017թ., 2019թ. և 2021թ.), կառավարության (34%, 52% և 17%՝ համապատասխանաբար 2017թ., 2019թ. և 2021թ.), ազգային ժողովի (12%, 30% և 14%՝ համապատասխանաբար 2017թ., 2019թ. և 2021թ.), նախագահի (17%, 79% և 28%՝ համապատասխանաբար 2017թ., 2019թ. և 2021թ.), ոստիկանության (29%, 51% և 18%՝ համապատասխանաբար 2017թ., 2019թ. և 2021թ.) նկատմամբ եղած վստահությունը կտրուկ նվազել է 2018-2019թթ. ընթացքում նկատված աճից հետո, բանակի նկատմամբ վերաբերմունքը մնում է համեմատաբար կայուն (77%, 89% և 81% համապատասխանաբար 2017թ., 2019թ. և 2021թ.):

Ինչ վերաբերում է արտաքին գործերի նկատմամբ վերաբերմունքին, ապա Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի հետ միասին միացյալ պետություն դառնալու հարցին դրական պատասխան է տվել Կովկասյան բարոմետրի 2021թ. հարցմանը մասնակցածների 1/3-ը:



Որքանո՞վ եք աջակցում Հայաստանի՝ Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի հետ միացյալ պետություն դառնալուն:
n=1437

Արցախյան պատերազմ

Բալթյան հարցման (Baltic Survey) համաձայն (անցկացվել է Gallup կազմակերպության կողմից 2018թ.)՝ հարցվողների ավելի քան 63%-ը կարծում է, որ Արցախի հարցի խաղաղ կարգավորումը հնարավոր է առանց ռազմական ուժի: Սակայն հասարակական կարծիքի ուղղությունը փոխվել է, և ըստ վերջին հարցումների՝

- Հայերի 36%-ը կարծում է, որ Ղարաբաղում նոր պատերազմի վտանգ կա, իսկ 24%-ը կարծում է, որ պատերազմը չի ավարտվել (Հայաստանում հանրային պատկերացումները ղարաբաղյան հակամարտության կարգավորման շուրջ, մարտ 2021թ., ՀՌԿԿ՝ Սիվիլիթաս հիմնադրամի պատվերով):
- Հայերի 53%-ը կարծում է, որ Ղարաբաղում նոր պատերազմի վտանգ կա, իսկ 19%-ը կարծում է, որ պատերազմը չի ավարտվել (Կովկասյան բարոմետր 2021թ.):

2020թ. նոյեմբերի 10-ի եռակողմ համաձայնագրի վերաբերյալ հասարակական կարծիքը տարբեր է. հարցվողների գրեթե կեսը ընդհանուր առմամբ չի պաշտպանում Համաձայնագիրը, սակայն հարցվողների ճնշող մեծամասնությունը (ավելի քան 80%) հիմնականում կողմ է հակամարտության գոտում ռուս խաղաղապահների տեղակայմանը (Հայաստանում սոցիալ-քաղաքական իրավիճակի գնահատում, 2021թ. ապրիլ-սեպտեմբեր):

Հակամարտության հետագա կարգավորում



Ձեր կարծիքով, ինչի՞ց պետք է սկսվի արցախյան հիմնախնդրի կարգավորումը (n_ARM=1100; n_ARTS=402) (n_ARM=1,100; n_ARTS= 402)

Այն հարցին, թե ինչից պետք է սկսել ղարաբաղյան հակամարտության կարգավորումը, Հայաստանի և Արցախի հարցվողները քիչ թե շատ նման պատասխան են տալիս: Ե՛վ Հայաստանում, և՛ Լեռնային Ղարաբաղում ամենաբարձրն են գնահատվել երեք ոլորտ՝ ռազմագերիների վերադարձը, անվտանգության երաշխիքները և Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցումը («Խոսում է հանրությունը. Արցախյան կոնֆլիկտի ներկան ու ապագան հեռախոսային հարցման արդյունքներով», Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, 2022թ.՝ Սիվիլիթաս հիմնադրամի պատվերով):

Նույն հարցման համաձայն՝ հակամարտության կարգավորման հարցում հարցվողները հիմնականում ընտրում են Արցախի կարգավիճակը որպես *անկախ հանրապետություն* տեսնելու տարբերակը, ընտրված երկրորդ և երրորդ տարբերակները վերաբերում են *Հայաստանի կազմում լինելուն* և *հատուկ կարգավիճակով Ռուսաստանի կազմում լինելուն*:



Ըստ Ձեզ՝ ի՞նչ կարգավիճակ պետք է ունենա Արցախը արցախյան հակամարտության վերջնական լուծման համար: n_ARM=1,100; n_ARTS= 402

Նույն հարցի մի փոքր այլ ձևակերպում է տրված 2021թ. Կովկասյան բարոմետրում, որտեղ Հայաստանից հարցվողներին խնդրել են նշել՝ արդյոք կընդունեն կարգավորման որոշակի տարբերակներ, թե ոչ. այստեղ հարցվողների մոտ 90%-ը համաձայն է (որոշակի հանգամանքներում միանշանակ կողմ է կամ ընդունում է) Արցախը որպես Հայաստանի ֆորմալ մաս ունենալու շուրջ, որին հաջորդում են Արցախը որպես անկախ երկիր (80%) և Արցախը Ռուսաստանի Դաշնության կազմում տեսնելը (53%):

Արցախյան հակամարտության կարգավորմանը անդրադարձ է կատարվել նաև Highgate խորհրդատվական ընկերության կողմից Արցախում անցկացված վերջին հարցման ընթացքում (Արցախցիների տեսակետները, 2022թ. դեկտեմբերի 2 – 2023թ. փետրվար), որտեղ կրկին անկախությունը համարվում է ամենացանկալի տարբերակը:



Արցախյան հակամարտության լուծման հետևյալ տարբերակներից ո՞րի հետ եք համաձայն: n=869

Այն հարցին, թե Հայաստանը ինչ քայլեր պետք է ձեռնարկի արցախյան հակամարտությունը կարգավորելու համար ՀՌԿԿ զեկույցի երկու ամենից հաճախ ընտրված պատասխաններն են՝ *պետք է հզորացնել բանակը* և *Հայաստանը պետք է հույսը դնի ինքն իր վրա* («Խոսում է հանրությունը. Արցախյան կոնֆլիկտի ներկան ու ապագան հեռախոսային հարցման արդյունքներով», Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, 2022թ.՝ Սիվիլիթաս հիմնադրամի պատվերով)



Ձեր կարծիքով, ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկի Հայաստանը Արցախյան կոնֆլիկտի լուծման համար: (n_ARM=1,828; n_ARTS= 669)

Ինչ վերաբերում է այն ուժերին, որոնք ապահովում են Արցախի ներկայիս սահմանների և բնակչության անվտանգությունը, ապա Հայաստանի հարցվողները տրված չորս տարբերակներից որևէ հստակ նախապատվություն չեն ունեցել, մինչդեռ արցախցիները շատ ավելի հաճախ նշել են ռուս խաղաղապահների և Արցախի պաշտպանության բանակի տարբերակները:



Ձեր կարծիքով՝ ո՞ր ուժերն են կարող լավագույնս ապահովել Արցախի ներկայիս սահմանների և բնակչության անվտանգությունը:
(n_ARM=1,684; n_ARTS= 664)

Արցախի բնակիչների տեսակետները հիմնավորում են նաև Արցախի անվտանգությունն ապահովող ուժերի/մարմինների դերը. այստեղ անվտանգության հիմնական երաշխիքներն են Արցախի բանակը (հարցվողների 96%-ը) և ռուս խաղաղապահները:



Ձեր կարծիքով՝ արդյո՞ք նշված մարմինները կարևոր դեր են խաղում Արցախի անվտանգության ապահովման հարցում (ԱՅՈ):

Եվ վերջապես, ըստ 2021թ. Կովկասյան բարոմետրի՝ հարցվողների ավելի քան 40%-ը Հայաստանի գլխավոր նպատակը համարում է 44-օրյա պատերազմից առաջ վերահսկվող բոլոր տարածքների վերականգնումը:



Ձեր կարծիքով՝ ո՞րը պետք է լինի Հայաստանի գլխավոր նպատակը Լեռնային Ղարաբաղի տարածքների առումով:
n=1547

Սփյուռքի ընկալումը

44-օրյա պատերազմից հետո 2021թ. անցկացված Հայկական Սփյուռքի հարցախույզն[1] իր հարցաշարում ավելացրել է մի քանի հարց՝ կապված Արցախյան պատերազմի և հակամարտության կարգավորման հետագա քայլերի հետ:

Հարցման համաձայն՝ ընդհանուր հարցվողների 68%-ը չի դիտարկում այլ տարբերակ, քան երկրի անկախությունը կամ Հայաստանի կազմում լինելը: Հարցվողների 10%-ից պակասն է դիտարկում Ադրբեջանի կազմում լինելու տարբերակը, եթե այլընտրանքը պատերազմն է:



Նշված պնդումներից ո՞րն է Ձեզ ավելի մոտ, եթե այդպիսին կա: n=2165

Ինչ վերաբերում է հակամարտության կարգավորմանն ուղղված ակնկալվող հետագա քայլերին, հարցվողների կողմից արվել են հետևյալ առաջարկությունները՝



Հայաստանի վարչապետին Արցախի վերաբերյալ ի՞նչ խորհուրդ կտայիք: N=2,326

[1] 2021թ. Հայկական Սփյուռքի հարցախույզի աշխարհագրությունը ներառում է Բելգիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը (Դոնի Ռոստով). պաշտոնական զեկույցը նախատեսվում է հրապարակվել 2023թ. մարտին

Հարցումներ, որոնց հղում է կատարվել

- Կովկասյան բարոմետր 2021-2022թթ., Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ - https://www.crrc.am/wp-content/uploads/2022/06/Barometer-2021_pptx_ENG_Final_14%E2%80%A406%E2%80%A422.pdf
- «Խոսում է հանրությունը. Արցախյան կոնֆլիկտի ներկան ու ապագան հեռախոսային հարցման արդյունքներով», Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, 2022թ. - https://www.crrc.am/wp-content/uploads/2023/01/Public-is-Speaking_Research-Report_CRRC-Armenia_ENG_04.01.2023.pdf
- Ղարաբաղյան հակամարտության կարգավորում, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, 2021թ. - https://www.civilnet.am/en/news/599811/the-overwhelming-majority-of-armenians-consider-return-of-captives-the-first-step-in-karabakh-conflict-settlement/
- Հայկական Սփիւռքի Հարցախոյզ 2019թ. - https://www.armeniandiasporasurvey.com/2019-survey
- Հայկական Սփիւռքի Հարցախոյզ 2021թ.
- Արցախցիների տեսակետները 2 փետրվարի 2023թ., Highgate խորհրդատվական ընկերություն -
- Հայաստանի սոցիալ-քաղաքական իրավիճակի գնահատում 2021թ. սեպտեմբեր - Էմ Փի Ջի ՍՊԸ (Խորհրդատու՝ Յուրիյ Կոպատկո)